№ 158 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 28 1899 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 28 № 158

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Բաժանորդագրութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Բաժանորդագրութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառի 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«Մշակի» գինն է, սեպտեմբերի 1-ից մինչև տարվայ վերջը ՉՈՐՍ ռուբլի. մէկ ամսվանը—մէկ ռուբլի: Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն չորս ամսվայ համար 2 դոլլար, Եւրոպայի բաժանորդները—10 ֆրանկ:

Կարդալութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ»; իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Բայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մինչև Երբ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Էջմիածնից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲԱՑԱՏԱՐԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Եւրոպական մամլից ու գրականութիւնից.

ՄԻՆՉԵՒ ԵՐԲ

Հարուստ երկրի մէջ ապրել և աղքատութեան մշտապէս սարուկ լինել, դա մի սարսափելի անպատեհութիւն, դժբախտութիւն է: Մենք աչք չենք բաց անում սոսկալի աղէտներից և ծանր կարօտութիւնից: Այլ ևս չենք տեսնում այնպիսի տարիներ, որ ընդարձակ տարածութեան վրա ազգաբնակութիւնը ապահովված լինէր իր ապրուստի կողմից: Եւ կարծես բարելից և աջող տարին պէտք է բացառութիւնների շարքն անցնի այսուհետև: Սակայն մեր երկիրը հարուստ երկիր է. նա չէ դատապարտված մշտական թշուառ և չքաւոր կեանքի: Գիտակցական աշխատանքով, նպատակայարմար բարեփոխութիւններով, ուսանդով և տոկունութեամբ կարելի է մեր երկրին տալ այն վայելուչ դիրքը, որին նա արժանի է շնորհիւ իր ձոխ բնական և բազմազան յարմարութիւններին:

Մի լեռնային Եվէյցարիա, աւելի պակաս յարմարութեամբ, քան մեր Կովկասը՝ կազմում է բարեկեցիկ երկիրներից մէկը: Մի աղքատ Ֆինլանդիա, որ հիւսիսային ժայռերի և ցուրտ կլիմայի մէջ, ստիպված է բաւականանալ կարճատև ամառով՝ կարողացել է ստեղծել մի գեղեցիկ տնտեսութիւն, որ ապահովում է նրա գիւղական ազգաբնակութեան կեանքը: Իսկ բազմաթիւ արհեստները, կատարելագործված արդիւնագործութիւնը, կրթութեան և զարգացման բազմատեսակ արտայայտութիւնները, որոնցով կարող են պարծենալ այդ երկիրները, բաց են անում ժողովրդի ապագայ բարգաւաճման և նրա հարստութեան համար հաստատուն աղբիւրներ և ասպարէզներ:

Մեր ազգաբնակութիւնը դեռ բաւականաչափ գիտակցութիւն և ինքնուրոյնութիւն չունի, որ առանց դրդիչ ոյժերի, խթանների և նախաձեռնութեան գործէ նոր շաւղով: Այդ դրդիչ ոյժերը կամ պէտք է լինին վարչական հաստատութիւնները կամ մեր երկրի ինտելիգենցիան: Դժբախտաբար մեր ինտելիգենտ դասակարգը մինչև այժմ շատ քիչ կուլտուրական ընդունակութիւններ է ցոյց տուել, և այն դէպքում, երբ նա արդարև առաջ է եկել յայտնի եռանդով և մի փոքր տոկունութեամբ՝ դա վերաբերվել է նրա մասնաւոր, անհատական կեանքին: Եթէ մենք ցանկանայինք մատնացոյց լինել այնպիսի ինտելիգենտների վրա, որոնք իրանց անձնուէր և արդիւնաւէտ կերպով նուիրել են ժողովրդի բարեկեցութեան զարգացման—մենք անկարող կը լինէինք անուններ տալ: Դա ցաւալի երևոյթ է և ցոյց է տալիս մեր վերին աստիճանի ստոր կուլտուրական և բարոյական մակերևոյթը:

Ի սէր ինտելիգենտի պատուի, ի սէր երկրի բարգաւաճման անհրաժեշտ է, որ մեր ինտելիգենտի մէջ վերջապէս զարթնէր նրա բարոյական պարտաւորութեան զգացմունքը, և նա դառնար օրինակելի աշխատաւոր իր երկրի համար և նպաստէր ընդհանուր կուլտուրական զարգացման մեր ազգաբնակութեան մէջ: Մինչև երբ պէտք է տևէ ներկայ անմխիթար վիճակը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄՏՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

I

Գերմանիան մի քանի շաբաթից ի վեր արդէն սկսել է տօնել իր հռչակաւոր զաւակներից մէկի՝ Գէօթէի ծննդեան 150-ամեակը, որ լրանում է ներկայ՝ օգոստոս ամսի 28-ին: «Գէօթէ» անունը մի այնպիսի հսկայական մեծութիւն է արտայայտում, որ նրան ընդհանրապէս Լուտերից յետոյ գերմանական մտքի և զգացմունքի ամենամեծ ներկայացուցիչը պէտք է համարել. իսկ մասնաւորապէս՝ իբրև բանաստեղծ նա նոյն ազգի բանաստեղծների թագաւորն է, և առաջնութեան պակը վազուց է որ չողզում է Ոլիմպոսի այս մեծ որդեգրի ճակատին: Այնպէս որ ինչպէս պատմութեան մէջ գոյութիւն ունի Լուտերի դարը կամ շրջանը՝ նոյնպէս կարելի է խօսել և Գէօթէի դարից կամ շրջանից: «Հսկայ» բանաստեղծը իբրև մի լուսատու արև փայլել է շարունակ գերմանական գրականութեան աստղազարդ հորիզոնում և իր շողերով հանդիսացել է լոյսի և ջերմութեան անսպառելի մի աղբիւր թէ ժամանակակիցների և թէ յետնորդների համար: Ցիրաւի, 19-րդ դարում Գէօթէի ստեղծագործութիւններով ամբողջ սերունդներ են կրթվել ոչ միայն Գերմանիայում կամ գերմանախօս երկրներում, այլ և ընդհանրապէս բոլոր քաղաքակիրթ և լուսաւոր անկիւններում: Ցիշում ենք, թէ ինչպէս ներկայ տարվայ յունվարին, երբ եւրոպական մի նշանաւոր թերթ հարց էր տուել գիտութեան և գրականութեան յայտնի ներկայացուցիչներից շատերին, թէ ինչումն է կայանում ներկայ դարու ամենամեծ գործը—մինչդեռ ոմանք պատասխանում էին՝ դարվինականութեան, ոմանք մարքսիզմի, ոմանք գալվանիզմի մէջ և այլն—մի տաղանդաւոր ընդհատ յայտարարում էր, թէ 19-րդ դարու ամենամեծ գործը Գէօթէի «Ֆաուստն» է: Արդարև մի ստեղծագործութիւն, որ իր տեսակումն անզուգական է և ներկայանում է իբրև պակ նորագոյն հաստատարհային բանաստեղծութեան և որը իրաւացի կերպով կոչվում է «Նոր աստուածաշունչ», որովհետև ամփոփում է համարեա 19-րդ դարու ամբողջ ոգին՝ իր թուլութիւններով, իր կորովով և առհասարակ բոլոր դրական և թէ բացասական արտայայտութիւններով: Իբրև ապացոյց այս բազմակողմանի և հանճարեղ վարպետի մեծութեանը՝ կարևոր է յիշել, որ նրա երկասիրութիւնները լոյս են տեսել անթիւ և բազմատեսակ հրատարակութիւններով: Եթէ ոչ բոլոր՝ գէթ կարևոր աշխատութիւնները թարգմանված են եւրոպական բոլոր լեզուներով: (Հայերէն, որքան մեզ յայտնի է՝ քիչ թարգմանութիւններ ունինք Գէօթէից, այն էլ մեծ մասամբ անյաջող. աչքի ընկնող պակասութիւնն այն է, որ Գէօթէի գլուխ գործոցը, «Ֆաուստը» դեռ թարգմանված չէ մեր լեզուով կամ եթէ թարգմանված է՝ փոշու տակն է մնում առանց լոյս աշխարհ գալու: Անուրանալի է ի հարկէ այն հանգամանքը, որ գերմաներէնը և մանաւանդ «Ֆաուստի» ճոխ, անմեմն և զարդարուն լեզուն մեր աղքատիկ և նորաստեղծ լեզուով այնքան էլ դիւրին չէ փոխադրել և նոյն-իսկ անկարելի է: Մանաւանդ իրողութիւնը ցոյց է տալիս, որ «Ֆաուստի» թարգմանութիւնները նոյն-իսկ եւրոպական լեզուներով դարձեալ չէ կարելի յաջողված համարել, չը նայելով որ այդ լեզուները անհամեմատ աւելի ճկուն, զարգացած և հարուստ են քան թէ մեր լեզուն): Վաղուց է գոյութիւն ունի Գէօթէի անուան հետ կապված մի անազին գրականութիւն, որ հետզհետէ աւելի լայնածաւալ բնաւորութիւն է ստանում: Նրա անձնուէրութեամբ և գեղարուեստական ստեղծագործութիւններով զբաղուել են շատ նշանաւոր քննադատներ—Քարլայլ, Գրիմ, Շերբէր, Բրանդէս և այլն. իսկ իր բնագիտական ուսումնասիրութիւններով զբաղվունքի նիւթ է տուել այնպիսի հռչակաւոր բնագէտների՝ ինչպէս են Հելմհոլց, Ֆիրխով, Հէքքել և այլն: Իր ստեղծագործութիւններով նա նիւթ է ժամանակարարել բազմաթիւ նկարիչների, երաժշտագէտների և ուրիշ արուեստագէտների: Վէյմարում, ուր նա կէս դարից աւելի անց է կացրել իր կեանքը՝ գոյութիւն ունի նրա անունով մի թանգարան և մի արխիվ. իսկ 1885 թուից սկսած հիմնվել է յայտնի «Գէօթէ ընկերութիւնը», որի բազմամարդ անդամների թիւում (մօտ 7000) գտնվում են գերմանական մտքի և գրականութեան ամենաընտիր ներկայացուցիչները: Այս ընկերութիւնն սկսեց և առաջ է տանում Գէօթէի երկերի լիակատար հրատարակութիւնը, որ ամենալաւն է—յայտնի Weimarsche Ausgabe. Բացի դրանից նոյն ընկերութիւնը հրատարակում է «Goethe Jahrbuch» տարեկան մեծ հանդէսը:

—

Ահա 150 տարի առաջ, 1749-ի օգոստոսի 28-ին, երեքօրեայ ծանր երկունքից յետոյ, «բոլորովին սև»՝ համարեա անկենդան՝ Ֆրանկֆուրտում (Մայնի վրա) լոյս աշխարհ եկաւ Ոլիմպոսի ապագայ մեծ որդեգիրը, Եօհան Վոլֆգանգ Գէօթէ: Շրջապատողները ծանր երկիւղի մէջ էին՝ երբ մեծ մայրը ուրախ չեչտով աւետեց դալկացած և սարսուռից այլայլված հարսին—«նա ողջ է»: Հանճար ծնող երկունքը ծանր էր, իսկ հանճարը փրկված էր. այո, նա ողջ էր, նա ապրում էր և ապրեց մինչև պատկառելի ծերութիւնը:

Դեռ մանկական-պատանեկան հասակում Գէօթէ մի նուրբ նախազգացումով կարծես դիտակցում էր արդէն իր հանճարը, իր ապագայ մեծութիւնը: Մի անգամ, երբ նա իր դպրոցական ընկերների հետ միասին անցնում էր փողոցով՝ մայրը նկատում է հեռուից, թէ ինչպէս նա իր քայլուածքով և մարմնի վայելուչ դիրքով աչքի է ընկնում և տարբերվում իր ընկերակիցներից, և երբ նա որդու ուշադրութիւնն է դարձնում այս տարբերութեան վրա՝ փոքրիկը պատասխանում է. «սա դեռ սկիզբն է. ապագայում ուրիշ բաներով էլ կը տարբերվեմ միւսներից...

Բնորոշ է նոյնպէս աստղի պատմութիւնը. մի անգամ նա հարց է տալիս իր մօրը—«արդեօք աստղերը իր օրօրոցի չրջանից տուած խոստումը կատարելու են թէ ոչ»: Մայրը պատասխանում է. «սիրելիս, ինչու անպատճառ աստղերի օգնութիւնն ես պահանջում. մենք առանց այդ էլ մեզ բաւական ենք զգում»: Մանուկ Գէօթէ պատասխանում է. «այն ինչ որ ուրիշներին բաւականացնում է՝ նրանով ես բաւականանալ չեմ կարող»: Գէօթէի մօր և հօր բնաւորութիւնները բոլորովին տարբերվում էին միմեանցից. հայրը չոր և սառն յատկութիւնների տէր էր, այն-ինչ մայրը աչքի էր ընկնում իր ուրախ, զուարթ և վառվռուն բնաւորութեամբ և այս պատճառով շատ սիրված էր շրջապատողներից: Այս յատկութիւններովը նա մեծ ազդեցութիւն ունեցաւ իր որդու վրա և առողջ ու կենսուրախ հակումների հետ միասին զարգացրեց և նրա վառ երևակայութիւնը: Գէօթէն ինքը խոստովանում է այս առիթով. «հօրից ժառանգել եմ կազմուածքը և կեանքի լուրջ հակումները, մայրիկից զուարթ բնաւորութիւնը և առակախօսելու ցանկութիւնը»:

«Մշակի» էջերը թոյլ չեն տալիս, և առհասարակ մեր նպատակից դուրս է, Գէօթէի բազմաբովանդակ կեանքի ընթացքը իր արտաքին և ներքին հանգամանքներով մանրամասն այստեղ առաջ բերել: Ոչ միայն այդ. մեզ անկարելի է նաև նրա ստեղծագործութիւնների մեծ շարքին

Սակայն աւելի հետաքրքիրը վանքապատկան Մաստարա գիւղն է, որի լայնատարած հողերի սահմանը երկու օր հազիւ կարելի լինի պտտել և որի յայտող բերքը կարող է կերակրել համարեա մի ամբողջ նահանգ։ Երկար տարիներ մաստարեցիք ևս ճնշված են եղել հարատահարիչ կապալառուների ձեռքի տակ, որոնք թէև երբեմն մեծ վաստակով են բաժանվել գիւղից, բայց և երբեմն մեծ վնասներով և ծեծվելով են փախել։ Որքան Մաստարան յայտնի է որպէս բազմահող և հարուստ գիւղ՝ նոյնքան նրա բնակիչները յայտնի են իրանց կոպիտ-ասիական բնաւորութեամբ։ Եղել է ժամանակ, որ մաստարեցին, միաբանվելով, մի անկիւն չէ տուել կապալառուին բնակվելու, չէ թոյլ տուել աղբիւրից ջուր վերցնելու, հաց չէ վաճառել ուտելու. խոտի խուրձը, որ արժել է 2—3 կոպէկ՝ վաճառել է կապալառուի վրա 40—50 կոպէկով... բայց չը նայած այդ բոլոր զրկանքներին՝ կապալառութեամբ պարապողների աչքը միշտ եղել է Մաստարայի վրա՝ որպէս մի չաղ պատառ, որից միշտ և ամեն ժամանակ կարելի է հազարներ վաստակել, այն էլ երկու ամսվայ ընթացքում միայն։

Բնակիչները կամենալով ընդ միշտ ազատվել դրսի կապալառուներից՝ որոշում են այս տարի կապալը վերցնել գիւղական համայնքի օգտին, որի համար ընտրում են հասարակական հաւատարիմներ։ Մաստարա գիւղի բերքի աճուրդի ժամանակ այս տարի, բացի հասարակութեան հաւատարիմներից, գալիս են աճուրդին մասնակցելու նաև երկու վաղարշապատցիներ։ Աճուրդի ժամանակ, որ կատարվում էր սովորաբար վանական կառավարութեան դրասենեակում, կառավարութեան անդամների ձեռքով՝ մէկը աճուրդը հասցնում է մինչև 150 խալվար ցորենի, իսկ միւսը—մինչև 160 խալվարի, իսկ Մաստարա գիւղի հասարակութեան հաւատարիմները—մինչև 165-ի, որոնց վրա մնում է աճուրդը։ Բայց որովհետև հասարակութեան հաւատարիմներից մէկը (նրա հարստութիւնը, ասում են, հասնում է մի քանի հարիւր հազարների), հակառակ իր խոստման, մերժում է գրաւական ներկայացնել, ուստի, մինչդեռ հասարակութեան միւս լիազօրները ուղևորվում են Մաստարա գրաւական բերելու՝ վաղարշապատցիները յարմար առիթ են գտնում ընկերանալու միմեանց հետ և աճուրդը բարձրացնելով մինչև 166 խալվարի՝ ներկայացնել սինօդին ի հաստատութիւն, յոյս ունենալով, որ մինչև լիազօրների գրաւական բերելը արդէն ամեն ինչ վերջացած կը լինի։

Չը նայելով որ սինօդը իր օրագրով ոչնչացնում է աճուրդը և հրամայում վանական կառավարութեան կալչափ նշանակել, այնու ամենայնիւ Մաստարա գիւղը կապալով է տրվում 150 խալվար ցորենի, ուրեմն 16 խալվար պակասով, յիշեալ վաղարշապատցիներին, որոնք այն վիճակի են հասցնում գիւղացիներին, որ վերջիններս, չը կարողանալով տանել իրանց կրած զրկանքները՝ մի օր քանդում են կապալառուների ամբարը, սեփականացնում են նրա մէջ ամբարած ցորենն ու գարին և կապալառուներին դուրս անում գիւղից։ Ինչպէս լսում ենք՝ կապալառուները դատ են սկսել մաստարեցիների դէմ և պահանջում են 32 հազար ր. վնաս. ուրեմն 8—10 հազար խալվար ցորեն արդիւնք տուող Մաստարան, ինչպէս ցոյց է տալիս պահանջը՝ տրված է եղել ընդամենը 150 խալվարի... ահա թէ ինչպէս են պաշտպանվում Մայր Աթոռի շահերը և որպիսի միջոցով են պատժում Մայր Աթոռի թշնամիներին և հայ գեղջուկի տունը քանդող կապալառուներին։

Արիստ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Գերմանական հնախոյզ Կարլ Լէման, որ Թիֆլիսում հիւր էր վերջին երկու շաբաթվայ ընթացքում՝ ուղևորվեց դէպի Երևան և Էջմիածին մի քանի օրով։ Այնտեղից վերադառնալով՝ Լէման կը ճանապարհվի դէպի Գերմանիա։ Նրա ճանապարհորդական ընկեր դոկտոր Բելը դեռ երկու ամիս էլ կը մնայ Վանում և ապա Անդրկովկասի վրայով կը վերադառնայ Բերլին։ Մենք առիթ ունեցանք ծանօթանալու այն զեկուցումների հետ, որ կարդացել են այդ գիտնականների ճանապարհորդութեան և հետազօտութիւնների մասին պրոֆէսորներ Ֆիրխով և Զախաու, և այն նկարագրութեան, որ տպված է Համբուրգի Աշխարհագրական ընկերութեան հանդէսում։ Վերջին նկարագրութիւնը մանրամասն է և պարունակում է տեղեկութիւններ ոչ միայն հնագիտութեան, այլ և ճանապարհորդական ուրիշ տպաւորութիւնների մասին։ Այդ նկարագրութիւնը կրում է «Reiseberichte von Armenischen Expedition der Herrn D-r W. Belck und D-r C. T. Lehmann» վերնագիրը։ Պրոֆէսոր Ֆիրխովի զեկուցումները, որ կարդացված են Բերլինի Մարդաբանական ընկերութեան 1898 թւի դեկտեմբերի 17-ի և ներկայ 1899 թւի ապրիլի 29-ի նիստերում, տպագրված են «Aus den Verhandlungen der Berliner anthropologischen Gesellschaft» հրատարակութեան մէջ։ Զախաուի զեկուցումը, որ կրում է «Zweiter Vorbericht über eine Forschungsreise in Armenien», կարդացված է ներկայ տարվայ յուլիսի 27-ին։ Այդ զեկուցումները տալիս են համառօտ բայց ամփոփ տեղեկութիւն այն նշանաւոր հետազօտութիւնների մասին, որ աջողվել է կատարել հին քաղդէական, ասորական, ուրարտական և հայկական աշխարհներում։ Լէման, որ ուսումնասիրել է մանաւորապէս հին ազգերի չափ և կշիռները՝ սկսել է հետաքրքրվել Անանիա Շիրակացու թողած աշխատութիւններով այդ առարկայի մասին։

—

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան օրգան «Кавказское Сельское Хозяйство» շաբաթաթերթերի վերջին 294 համարում տպագրված է մի մանրամասն ծրագիր, որ մշակել է թերթի խմբագրութիւնը՝ տեղեկութիւններ ժողովելու ներկայ տարվայ բերքի մասին։ Այդ տեղեկութիւնները ստանալուց յետոյ ընկերութիւնը պէտք է միացնէ միւս, արդէն յայտնի նիւթերի հետ և ամբողջացնելով կազմէ ներկայ տարվայ ընդհանուր նկարագիրը։ Ցանկալի է, որ գաւառական մեր գործողները իրանց տեղեկութիւններով օգնէին ընկերութեան՝ պարզելու այդ կարևոր և նշանաւոր խնդրի վիճակը։

—

Նոր շինած Պետրովսկ—Բագուի երկաթուղու գնացքները արդէն ընդհատ-ընդհատ շարժում են կատարում գծի բոլոր երկարութեամբ։ Սաժուր գետի վրայով շինված է ժամանակաւոր կամուրջ, որ պէտք է փոխարինվի յետոյ աւելի ամուր կամուրջով։ Երթևեկողները այժմ վճարում են բարեգործական նպատակով մի յայտնի գումար, որը սակայն ամենևին պակաս չէ իսկական տոմսակավճարից։ Արձակ պլատֆորմի վրա գնացող մշակները վճարում են մի-մի բուբլի, չունենալով ոչ մի յարմարութիւն և ոչ մի պատսպարան գնացքի վրա։

—

Ստացանք «Հաշիւ խնամարկութեան հոգևորականաց Նոր-Նախիջևանի և շրջակայ վեց գիւղօրէից Նորին՝ վասն 1898 ամի» գրքոյկը, որը բաղկացած է 16 փոքրագիր երեսներից։ Ինչպէս երևում է գրքոյկի մէջ տպված տեղեկագրից՝ Հոգատար Խնամարկութիւնը 1898 տարվայ ընթացքում ունեցել է ընդամենը մուտք՝ 910 բուբլի 97 կոպէկ, իսկ ծախք՝ 443 բուբլի 6 կոպէկ։ Անդամների թիւն է 62։

—

Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Յայտնի է, որ պ. Նահանգապետի կարգադրութեան համաձայն, Թիֆլիսի ոստիկանութիւնը ստիպում է բնակիչներին՝ տների բակերը և փողոցները մաքուր պահել. իսկ աղբը ուր թափելու համար կարգադրութիւն չէ եղած հեռաւոր թաղերի բնակիչների համար, որոնք Կուր գետից շատ ու շատ հեռու են ապրում։ Հարուստ և միջին դասակարգի բնակիչները փողի ոյժով ազատ են այդ տեսակ կարիք զգալուց, իսկ չքաւոր դասակարգի պատկանողները, մի քանի կոպէկ ծախսեր անելուց ազատվելու համար՝ իրանց տնային աղբերը գիշերով թափում են հեռաւոր փողոցների խուլ մասերում։ Իբրև ապացոյց՝ ընթերցողը թող անցնէ և տեսնէ, թէ ինչ տեսակ ապականութեան մէջ է թաղված Խօջիվանքի հայոց հանգստարանի պարսպից դուրս գտնվող իշխան Բէհբութեանների և կալուածատէր Միրզոյեանների ահագին տարածութիւնով դատարկ տեղը։ Նոյն տեղի շրջակայ բնակիչները հանգստարանի շուրջը թափում են սատկած հաւեր, շներ, կատուներ և ամեն տեսակ տնային աղբ։ Զարմանալի է, որ յարգելի կալուածատէրերը բնակիչներից միմիայն օգուտն են ստանում, իսկ ահագին տարածութիւն ունեցող կալուածքները հակառողջական պայմանների մէջ են թողնում։ Հրաւիրում ենք քաղաքիս սանիտարական ժամանակավորի յարգելի անդամների ուշադրութիւնը կալուածատէրերի անհոգութեան վրա։

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են հետևեալը. «Կաղզուանից 5 ժամ հեռաւորութեան վրա գտնվող Քիրս կոչված հայաբնակ գիւղը, որը կտրված և առանձնացած է շատ թէ քիչ լուսաւորված տեղերից՝ մեր վաչխառուների համար մի կատարեալ ապաստարան է դարձել։ Այսպէս, 80—90 տնից բաղկացած Քիրսի պէս մի գիւղում, չը նայած որ նա բնական բարիքներից օժտված մի տեղ է, թէ իր ջրի շատութիւնով, թէ խոտի և պտղի առատ արդիւնաբերութեամբ՝ չնորհիւ անխիղճ հարստահարութիւնների, այսօր չէ գտնվում յիշեալ գիւղում մի հատիկ ընտանիք, որ ցորեն հաց ուտէ, և չը կայ մէկը՝ որի հագին կարկատած տրեխ չը լինի։ Բերենք մի օրինակ։ Քիրսը, ինչպէս ասացինք, նշանաւոր է իր խոտի առատ արդիւնաբերութեամբ. դա միենոյն ժամանակ նրանց նիւթական ապահովութեան գլխաւոր աղբիւրն է կազմում։ Աւեն տարի, աշնանը, երբ գործը վերջանում է՝ յիշեալ գիւղացիները սայլերով խոտ են բերում Կաղզուան վաճառում. ամենասովորական տարին խոտի պուդը տալիս են 40 կոպէկով։ Ինչպէս ուրիշ շատ տեղեր՝ նոյնպէս և մեզանում այս տարի անձրև չեկաւ, որի հետևանքը եղաւ ինչպէս հացի՝ նոյնպէս և խոտի թանգութիւն։ Մեր վաչխառուները հազար ու մի աչք ունեն, որոնք յետ ու առաջ տեսնում են։ Այնանը, երբ դեռ ոչինչ յայտնի չէր, ոսկու տոպրակներով վազեցին Քիրս, և օգտվելով խեղճ գիւղացու անթիւ կարիքից, պուդը 15 կոպէկով հազարաւոր պուդ խոտ գնեցին. մտածեցէք՝ 40—50—60 կոպէկ ուր, 15-ը ուր։ Ի

ժամանակագրական կարգով և առանձին-առանձին հետևել։ Այնպէս որ ստիպված ենք մի կողմից նրա կեանքի խոշոր գծերի համառօտ նկարագրութիւնը միայն անել, միւս կողմից առհասարակ բաւականանալ ըստ կարելոյն հիմնական և ընդհանուր գոյներով բնորոշել Գէօթէի դեղարուեստական և մարդկային արժանիքը։

Մինչև կարգ կրթութիւնը մասնաւոր կերպով, տանը, ձեռք բերելուց յետոյ՝ հօր ցանկութեամբ, իրաւաբան դառնալու նպատակով՝ նա յաճախեց սկզբում Լայպցիգի, յետոյ Ստրասբուրգի համալսարանները։ Նա սկզբում դասախօսութիւններին շատ չէր հետևում, գրում էր կամ «Փոքրիկ Պարիզում» (Գէօթէն այսպէս է անուանում իր ժամանակի Լայպցիգը) զանազան զուարճութիւնների էր անձնատուր լինում։ Իսկ վերջերը նա սկսեց պարապել, և 21 տարեկան հասակում Ստրազբուրգում դոկտորական քննութիւն տուեց։

Այս երկու համալսարանական քաղաքներում յաջորդաբար այնպիսի միջադէպեր տեղի ունեցան, որոնք Գէօթէի վրա շատ խոր և ազդու տպաւորութիւն թողին։ Իր հայրենի քաղաքում, դեռ 15 տարեկան հասակում, նրա մէջ արթնացել էր մի ուժեղ զգացմունք դէպի «Գրէտխէն». բայց սա անմեղ, դեռ պատանեկան բնաւորութիւն ունէր և անցողական էր։ Լայպցիգում, և մանաւանդ Ստրազբուրգում, նրա կուրծքը շարժվում է սիրոյ աւելի ուժգին և փոթորկալից յոյզերով։ Ունենալով տաք, կրակոտ և հեշտ յափշտակվող բնաւորութիւն՝ նա կարճ ժամանակամիջոցում երկու անգամ սիրահարվում է։ Գէօթէն ինքը գեղեցկադէմ և վայելչակազմ էր, խոշոր, կենդանի և վառվռուն թուխ աչքերով. ասում են, որ նա իր ժամանակի ամենագեղեցիկ երիտասարդն էր, մի մարմնացած Ապոլոն, որի առաջ մի անգամ Վիլանդը ոգևորութիւնից ծունկ էր չոքում՝ չը նայելով որ այս վերջինին Գէօթէն իր «Götter, Helden und Wieland» գրուածքով կծու կերպով հեգնել էր։ Հասկանալի է, թէ այսպիսի երիտասարդը կանանց շրջանում ինչ աջողութիւն պիտի ունենար։

«Արքած պէտք է լինենք բոլորս, ասում է նա. երիտասարդութիւնը արքեցողութիւն է՝ առանց գինիի»։ Այս արքեցողութեան շրջանում, այս մրրկածուփ օրերում նա գրում է իր լիրիքական ամենաընտիր բանաստեղծութիւնները, որոնք ուրիշ բան չեն՝ բայց եթէ ապրած օրերի հաւատարիմ մատեաններ։ Ինքն անձամբ խոստովանում է. «իմ բոլոր լիրիքական բանաստեղծութիւնները առիթի, հանգամանքի բանաստեղծութիւններ են»։ Ցիրաւի, սիրոյ և ոգևորութեան հրով բորբոքված սիրտը պէտք է անշուշտ երգէ, եթէ պատռվել, խորտակվել չէ ուզում. և իր «երգերումն» ու մանաւանդ սքանչելի «բալլադներում» հնչում է ոչ միայն խանդավառ, անզուսպ և հրատապ սիրոյ լարը, այլ և սիրոյ ծնունդի—վշտի և տանջանքի դառն մորմոքը, անդ-յս կարօտի աղեխարշ մրմունջը։ «Չի ցամաքի, չի ցամաքի յաւիտենական սիրոյ արցունքը։ Կիսաչոր աչերին ախ ինչ դատարկ, ինչ ամայի է թւում աշխարհը։ Չի ցամաքի, չի ցամաքի տարաբախտ սիրոյ արցունքը...» Սէրը լինելով անգամ անբախտ՝ այնքան բարձր, այնքան վսեմ է նրա համար, որ դառնալով դէպի վերը՝ նա բացագանչում է. «ափսոսում եմ ձեզ, երկնային աստղեր, որովհետև չէք կարող սիրել, չը գիտէք ինչ է սէրը»։

Հայտնէն, որ իբրև լոկ քնարերգու միանգամայն արժանի է Գէօթէի հետ միևնոյն շարքը դասվելու՝ ահա թէ ինչ գոյներով է նկարագրում Գէօթէի այս շրջանի լիրիքական հատուածները. «Նրանք հիւսուած են մի անարտայայտելի կախարդանքով. ներդաշնակ տաղաչափութիւնը փաղաքշում է քո սիրտը իբրև մի քնքոյշ սիրուհի. խօսքը գրկում փայփայում է քեզ և միտքը համբուրվում է քեզ հետ»։ Սիրոյ առաջին փոթորիկներում նա արտադրեց նաև ուրիշ գլուածքներ և առհասարակ այս շրջանում ծնունդ առան նրա ապագայ նշանաւոր ստեղծագործութիւնների սաղմերը—«Ֆաուստ», «Վէրթէր» և այլն։

«Քէտէյից» և «Ֆրիդէրիկէից» յետոյ՝ ապագայում նրա կուրծքը դեռ մի քանի անգամ էլի բոցավառվեց սիրոյ կրակով—«Լոտտէ», «Տիկին ֆօն Շտայն», «Քրիստինէ Վուլպիուս». բացի սրանցից՝ կարճ տևողութեամբ նրան յուզել, յափշտակել են Ֆրանկֆուրտի մի հարուստ դրամատէրի աղջիկը, երկու «Իտալուհի քոյրերը», դերասանուհի Շրէօդէր, «Միլանդուհին» և այլն։ Վերջին «սէրը» Ուլրիկէ ֆօն Լէվէցօվն էր, որ նրան յափշտակեց 74-ամեայ հասակում՝ երբ նա Մարիենբադում բժշկվում էր։ Իրար յաջորդող այս սիրահարական արկածները նրան ուժգին դրդումներ են տուել, և նա համաբեա իր ամեն մի «սէրը» տարբեր անուններով անմահացրել է իր ստեղծագործութիւններում։ Իր 7 «ուժեղ սիրուց» նշանաւոր են Վայմարի երկու դէպքերը—տիկին ֆօն Շտայն, որի հետ նա 10 տարուց աւելի մտերիմ յարաբերութեան մէջ էր և որին 1000-ից աւելի նամակներ է գրել, և Քրիստինէ Վուլպիուս, մի հասարակ աղջիկ, որին նա առաջին անգամ 1789-ին տեսաւ՝ սիրահարվեց և շուտով կապվեց նրա հետ, բայց պաշտօնապէս ամուսնացաւ միայն 1806 թւին։

«Götz von Berlichingen»-ից և մանաւանդ «Werther»-ից յետոյ երիտասարդ բանաստեղծն արդէն մեծ համբաւ ստացաւ, և նա դեռ 25 տարեկան էր միայն՝ երբ Վայմարի մեծ դուքս Աւգուստը նորան առաջարկեց թողնել Ֆրանկֆուրտը և տեղափոխվել իր պալատը։ Գէօթէն ընդունեց այս առաջարկը և դրանով շարժեց այնտեղի ազնուական դասակարգի և մանաւանդ պալատականների նախանձը, որոնք հաշտվել չէին կարող այն իրողութեան հետ, որ մի «հասարակ քաղաքացի» մեծ դքսից այդպէս բարեհաճ կերպով հովանաւորվում է և կարճ ժամանակում ոչ միայն նրա սիրելին և մտերիմ բարեկամն է դառնում, այլ և պալատում դիպլոմատիական և ներքին վարչական ամենաբարձր պաշտօնների է արժանանում։

Երիտասարդ «գաղտնի խորհրդականը» պալատական զբաղմունքների հետ միասին չէր դադարում գրելուց, և պալատը երբէք չանդամահատեց նրա հանճարը՝ ինչպէս շատերը ենթադրում էին. ընդհակառակն, նա այստեղ նոր դրդումներ ստացաւ և արտադրեց յաջորդաբար իր ամենալաւ երկերը—«Tasso», «Wilhelm Meisters Lehr-und Wanderjahre», «Herman und Dorothea», «Wallverwandtschaften», «Faust» և այլն։ «Faust»-ի առաջին մասը լոյս տեսաւ 1817 թւին, իսկ երկրորդ մասը նա վերջացրեց մահուանից միայն մի քանի օր առաջ։

Վայմարից նա մի քանի անգամ ճանապարհորդութիւններ կատարեց դէպի Շվէյցարիա և երկու անգամ դէպի Իտալիա, առաջին անգամ ծածուկ և կեղծ անունով։ Իտալիայի գեղեցիկ բնութիւնը և կլասիկական արուեստը նրա վրա անշուշտ ուժեղ տպաւորութիւն պիտի թողնէին։ Իբրև այս ճանապարհորդութեան ամենալաւ պտուղներ՝ յիշատակութեան արժանի են «Տասսօն» և «Հռոմէական էլէգիաները»։ Բացի գեղարուեստական ստեղծագործութիւններից՝ նրա հանճարեղ և բազմակողմանի միտքն զբաղված էր նաև բնագիտական և փիլիսոփայական ուսումնասիրութիւններով. մեծ հետաքրքրութեամբ նա ուսումնասիրում է պանթէիզմի հայր՝ Սպինոզային. իսկ դէպի բնութիւնն ունեցած իր անսահման սէրն ու յափշտակութիւնը նրան առաջնորդում են դէպի բնագիտական հետազօտութիւնները։ Նա իր «Գոյների ուսումը», ինչպէս և անատոմիական մի քանի գիւտերով, մանաւանդ «Բոյսերի մետամորֆոզով», իբրև բնագէտ նոյնպէս հռչակաւոր դարձաւ։

(Կը շարունակվի)

հարկէ, առևտրի այս տեսակ պայմանի մէջ մտնում է և այն, որ գիւղացին ինքը պիտի ջրէ, ինքը տաբեկան մի որոշ տուրք պիտի տայ, ինքը պիտի քաղէ, կրէ, իր սայլով, իր եզնով, իր մարդով պէտք է տանի քաղաքը և «հանեցէք աղա» ասէ, ու ինքը յետ դառնայ։ Եթէ գիւղացու քաղը, տուրքը, ջուրը պուդին հաշւենք 5 կոպէկ, 5 կոպէկ ևս պուդին տանելու քրէհը, որ սովորական վարձն է՝ կըստանանք 10 կոպէկ. 15-ից հանենք 10-ը, կըստանանք 5-ը։ Մի պուդ խոտը ուրեմն նա վաճառել է 5 կոպէկով, իսկ այժմ հրապարակի վրա վաճառվում է 60 կոպէկի. 60—5-ը՝ կըստանանք 55 կոպէկ. ուրեմն մի պուդի մէջ գիւղացին կորցնում է 55 կոպէկ. եթէ հաւատալու լինենք, ինչպէս որ հաւատացնում են գիւղացիները, որ իրանք 2000 պուդ խոտ, պուդը 15 կոպէկով դուրս են տուել՝ այն ժամանակ կը տեսնենք, որ միայն այս տարի, Քիրս գիւղը տուժել է 1000 բուբլի, չը հաշված ցորենից, մրգից և ուրիշ առևտրական վաճառքներից ստացված վնասները։ Ահա թէ ինչու այսօր քիրսեցին հացից ու թացից զրկված՝ դէպի անդունդ է գլորվում»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սալմաստ, օգոստոսի 15-ին

Անցեալ մեր նամակում խօսելով այն տխուր երևոյթի մասին, որ սալմաստեցին այժմ սկսել է գաղթել տնով տեղով՝ այս հարցն էի դրել. մթէ սալմաստեցին չէ կարող իր ընկի երկրում մի կտոր հաց ճարել, որ ստիպված չը լինի երկրէ երկիր Թափառել ընտանիքով հանդերձ, ենթարկվելով պանդխտութեան դառն ու դաժան պատահարներին։

Այս հարցը կարօտ է երկու տեսակ պատասխանի։ Առաջին՝ սալմաստեցին բախտախընդիր է, բառի բուն նշանակութեամբ։ Տարիներ առաջ, ով գիտէ ինչ աջող դէպքերի շնորհիւ, մի քանի անձնաւորութիւններ աջողած են 4—5 հազարների տէր դառնալ, և ահա մեր նախանձոտ սալմաստեցին մինչև հոգու խորքը շահագրգռված, ոչ մի բարոյական և ֆիզիքական զոհողութիւններ չէ խնայում հասնելու համար յիշեալ բախտաւորներին. բայց իզուր, ընդհանուր առմամբ աւելի յետ են գնում, քան թէ առաջ։

Գալով երկրորդ տեսակ պատասխանին, Պարսկաստանի մէջ, թողնելով ուրիշ բաները, կայքի ապահովութիւն չը կայ։ Շնորհիւ օրէնքի բացակայութեան, պարսիկ պաշտօնեան, մի որ և է քաղցած նայիբ (մի քանի գիւղերի կառավարիչ) տարիների ընթացքում աննկատելի կերպով կեղեքել է ժողովրդին, իսկ այս քանի տարիների ընթացքում նորակազմ սարփարաստութիւնը այն աստիճան առաջ գնաց իր ապօրինի տուգանք առնելում, որ որչափ մի որևէ գիւղի արքունի հարկն է՝ մի այդչափ էլ տուգանք է առնվում իւրաքանչիւր տարին։

Սալմաստի սարփարաստութիւնը այնքան իւղալի պատառ է երևում պարսիկ ընչաքաղց պաշտօնեային, որ վերջերս Թաւրիզի քարգուղարխանայից տարեկան 1500—2000 թուման կապալով են վերցնում և գալիս Սալմաստ՝ սարփարաստ լինում։ Ընթերցողին եմ թողնում երևակայել և հասկանալ, թէ ինչպէս կը վարվի այդ հաղարներ վճարող խանը անպաշտպան գիւղացու հետ, որ բացի իր վճարը գոյացնելուց, մի այդքան էլ պիտի աշխատէ, չը խօսելով մի խումբ ֆէրրաշների մասին, որոնք ոչնչով չեն ուզում յետ մնալ։

Վերոյիշեալ զրկանքների դէմ սալմաստեցին, որը պէտք է ընդհանուր ոյժով պաշտպանվէր, ոչինչ չէ արել։ Զարմանալի է, որ այդ ժողովուրդը երբէք սովոր չէ համայնական ոյժով գործելու եղանակին. գիւղերից իւրաքանչիւրը, երբ չատ նեղվում է քայքայիչ սարփարաստներից՝ մի քանի տասնեակ սարաղրութեամբ մի թոյլ բողոքագրով հաղիւ է դիմում Ատրպատականի կուսակալին կամ թեմական առաջնորդին, որոնց և ոչ մինից էլ հատարեա իրական օգնութիւն չէ լինում։ Մարդ այստեղ ինքն իրան հարց է տալիս. խեղճ ու անտէր ժողովրդի դրութիւնն ով պիտի բարւոքէ, նրա ցաւերն ով պիտի ասէ, խանների և բէգերի կամայականութիւնից ով պիտի ազատէ նրանց։ Ի՞նչ. մթէ չէ կարելի ամեն անգամ ժողովրդից եկած բողոքագիրը կուսակալին ներկայացնել կամ Թէհրան բարձր կառավարութեան ուղարկել և դարման պահանջել. մթէ չէ կարելի կառավարութիւնից մի յատուկ պաշտօնեայ ուղարկել տալ Սալմաստ, կարգադրելով, որ այդ պաշտօնեան իր վարձը Սալմաստից ստանայ օրինաւորապէս, պահանջելով նրանից միմիայն քիչ թէ շատ արդարադատութիւն, և վերջապէս, մթէ չէ կարելի առաջնորդարանի հովանաւորութեան տակ տեղական հոգաբարձութիւն կազմել, որի պաշտօնը լինի սարփարաստների գործունէութեան վրա հսկել, անհատներին պաշտպանել կամայականութիւնից և գիւղերի մէջ փոխադարձ օգնութեան կապ հաստատել։ Այդ բոլորն էլ կարելի է, թեմական առաջնորդը կարող է անել։ Հանգուցեալ Ստեփանոս եպիսկոպոս Մխիթարեանի օրով պարսկահայը ազատ շունչ էր քաշում. վայն էր եկել այն նայիբի գլխին, որը գիւղացուց մի թուման տուգանք էր առել։ Յատուկ ուշադրութիւն ենք դարձնում այս տխուր իրողութիւնների վրա, իրողութիւններ, որոնք սպառնում են մի քանի տարուց յետոյ բոլորովին դատարկել Սալմաստը հայութիւնից։

Բ. Սարդարբէգեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ինչպէս հեռագրում են «Новости» լրագրին՝ Դրէյֆուսի գործի քննութեան մասին վճիռ պէտք է կայանար ամսիս 26-ին, հինգշաբթի օր։

—Արտասահմանեան լրագիրների ասելով՝ Զոլայի գործի քննութիւնը տեղի կունենայ Վերսայլում նոյեմբերի 11-ին (23-ին)

—Մայոր Գարտման, հիմնվելով հաստատ հիմունքների վրա, ապացուցել է, որ բordէրօի հեղինակը Դրէյֆուս չէր կարող լինել և հաստատել է գեներալ Դէլուայի կատարեալ անծանօթութիւնը հարցի հետ։

—«Figaro» լրագրում տպված է ինստիտուտի անդամ Գաբրիէլ Մօնոի նամակը այն խօսակցութեան մասին, որը նա ունեցել է անցեալ երեքշաբթի օր Ֆրէյսինէի հետ երկաթուղու կայարանում։ «Դուք լաւ գիտէք,—ասել է ի միջի այլոց Մօնո,—որ միայն Դրէյֆուսի արդարացումն կարող է ներքին խաղաղութիւն ստեղծել։ Իմ մի բարեկամը ասեց ինձ այս քանի օրերս. «Եթէ ես Ֆրանսիայի թշնամին լինէի՝ միայն մի բան կը ցանկանայի, այն է նորից դատապարտել Դրէյֆուսին»—Ձեր խօսակիցը բոլորովին արդարացի է նկատել,—պատասխանեց Ֆրէյսինէ. դատապարտել՝ կը նշանակէ անվերջ դարձնել մեր խռովութիւնները։ Բոլորս էլ պէտք է ցանկանանք արդարացումն։

—«New-York-Herald» լրագրի Բէննի թղթակից Մարսէլ-Պրէվօ հետևեալ հետաքրքիր լուրն է հաղորդում, որը, ինչպէս ասում է՝ քաղել է ամենաարժանահաւատ աղբիւրից։ Նա ասում է, թէ ֆրանսիական գլխաւոր շտաբը, կամ ինչպէս ինքն է անուանում, դաւադիրները, գլուխ ունենալով գեներալ Բօժէին՝ մտադիր են, հէնց որ Բերտիլիոնի ցուցմունքները իրանց ցանկացած տպաւորութիւնը չը գործեն դատաւորների վրա՝ իսկոյն փախուստ տալ իրանց բռնած ընթացքից։ Որպէս զի այդպէս լինեն Դրէյֆուսին կատարեալ արդարացնելուն, նրանք մտադիր են ուրիշ միջոցների դիմել. նրանք բordէրօն կը վերագրեն Էստէրհազիին։ Կաշխատեն համոզելու, որ Դրէյֆուսի և մի ոմն Բ մէջ տեղի է ունեցել մտերիմ յարաբերութիւն, որը միևնոյն ժամանակ բարեկամական յարաբերութեան մէջ է եղել Էստէրհազիի և Դրէյֆուսի ընտանիքի հետ։ Դրէյֆուս որպէս թէ անզգուշութեամբ զինուորական գաղտնիքը յայտնել է Բ-ին, իսկ Բ-ն այդ միևնոյն գաղտնիքները յայտնել է իր կողմից Էստէրհազիին, որը և յանձնել է արտասահման։ Այդպիսով Դրէյֆուս յանցաւոր կը ճանաչվի լրտեսութեան մէջ, և ոչ թէ պետութեան դէմ դաւաճանութեան մէջ։ Նրան կը դատապարտեն, բայց թեթև՝ մէկ տարուց մինչև հինգ տարի բանտարկութեան, և շուտով կազատվի, որովհետև նա արդէն կրել է իր պատիժը Սատանայի կղզում։ Զօրքի պատիւը կը վերականգնցնվի և դատաւորների խիղճը կը թեթևանայ։

—Սարրա Բերնար պատրաստ է պնդել երդումով, որ Բօշֆօր քննիչ Բերդիւլօսի մօտ յայտնել է. «Ես համոզված եմ Դրէյֆուսի անմեղութեան մէջ, բայց առանձին ենթադրութիւններ ստիպում են ինձ պնդել բոլորովին հակառակը։

—Լուրեր են պատում, որ գեներալ Բուադէֆր մտադիր է փոխել իր բռնած ընթացքը և ցուցմունք տալ Դրէյֆուսի օգտին։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

26 օգոստոսի

ՄՕՍԿՎԱ։ Այսօր Կազանի երկաթուղու ճանապարհով հասաւ Տրդեհաչէջ ցուցահանդէսը, որը կանգ առաւ երկաթուղու գծի վրա՝ Սօկոլնիկում։ Վագը ցուցահանդէսը ճանապարհ կընկնի Պետերբուրգ, իսկ այնտեղից Սիբիր։

Մօսկվայի շրջակայքում, անընդհատ տեղացող անձրևների պատճառով, որոնք արդեւք են լինում հացաբոյսերը ժողովելուն, մաղթանքներ են կատարվում անձրևները դադարելու համար։

ԿՈՍՏԱՆ։ Մէկ շաբաթից աւել է, ինչ տեղի են ունենում հեղեղներ, որոնք արգելք եղան գարնանացանքները ժողովելուն։ Մի քանի տեղերում աշնանացանքների վրա որդունք է երևացել։

ԽԱՐԿՕՎ։ Այսօր հավալսարանի եկեղեցու մէջ՝ դասախօսութիւնները սկսելուց առաջ մաղթանք կատարվեց, ուսումնական շրջանի հոգաբարձուի, պրոֆէսօրների և ուսանողների ներկայութեամբ։

ԿԱՎԻՇ։ Այսօր, առաւօտեան, կրակ ընկաւ Էբէրսկի շաքարի ահագին գործարանը, որ գըտնվում է Կաւիշի մօտ։ Գործարանը եղբարք Բէնգան ակցիօներական ընկերութեան սեփականութիւնն է։ Կորուստը հաշւում են մի քանի հարիւր հազար։ Գործարանը ապահովացրած է «Якорь» ընկերութեան մէջ։

ՍԱՐԱՏՕՎ։ Անընդհատ անձրևներ. եղանակը ցրտել է. աշնանացանքները լաւ բոյս են տուել։

ՐԷՆՆ։ «Հաւասի գործակալութիւն»։ Դատարանի նիստը բացուեց 6 ժամին 40 րոպէին։ Լաբօրի հաղորդում է, թէ տեղեկութիւն է ստացել, որ Պանիցարդի և Շեվարցկօպէն քաղաքակից պատճառով չեն կարող Բէնն գալ ցուցմունքներ տալու, բայց նրանք կը պատասխանեն յանձնաժողովի առաջ, որին կուղարկէ զինուորական դատարանը հարց ու փորձի ենթարկելու նրանց իրանց քնակութեան տեղը։ Լաբօրի պահանջում է, որ հեռագրով նշանակվի յանձնաժողովը։ Պալէօլոգ ենթադրութիւն է յայտնում, թէ Դէլկասէ կուղարկէ յանձնաժողով, բայց չէ կարծում թէ կարելի լինի հեռագրել։ Նախագահը նոյնպէս այդ անհնարին է համարում։ Կարրիէր յիշեցնում է, որ չարժէ գործի քննութիւնը ընդմիջել։

Մինչև Լաբօրիի իր եզրակացութիւնները գրելը, դատարանը հարց ու փորձի է ենթարկում Կոշֆերին։ Վկան ասում է, թէ Դրէյֆուս չփոխվեց դիւ-Պատիի հարցերից՝ թելադրութեան ժամանակ, և, տեսնելով սեղանի վրա բէվոլվէր, բացագանչեց. «Ես չեմ ցանկանում սպանել ինձ. ես ցանկանում եմ հաստատել իմ անմեղութիւնը»։

Լաբօրի ներկայացնում է իր եզրակացութիւնները, որոնց մէջ յիշեցնում է, թէ ինչ հարցեր պէտք է առաջարկվեն Շեվարցկօպէնին և Պանիցարդիին, այն է. երբ են ստացել նրանք բordէրօն, ինչ էին պարունակում իրանց մէջ դոկումենտները. ստացել են նրանք արդեօք թնդանօթաձգութեան ձեռնարկը. բordէրօի հեղինակն իր գրած «petit bleu»-ն, և ունեցել են նրանք արդեօք մեղադրեալի հետ անմիջական յարաբերութիւններ։

Մերսիէ, հերքելով Ֆրէյշէտերի ցուցմունքները, պնդում է իր առաջվայ յայտարարութիւնների վրա Պանիցարդիի հեռագրի վերաբերմամբ և մեղադրում է Ֆրէյշէտերին այն քանի մէջ, որ նա Մաղագասկարում մի քանի անգամ ցոյց է տուել մտաւոր ընդունակութիւնների խանգարում։

Քննելով Լաբօրիի եզրակացութիւնները՝ դատարանը յայտնում է, թէ միայն Ժուօն իրաւունք ունի դիմել յանձնաժողովին, որը պէտք է հարցուփորձի ենթարկէ Շեվարցկօպէնին և Պանիցարդիին։ Լաբօրիի հարցին՝ Ժուօ յայտնում է, թէ հրաժարվում է դիմել այդ յանձնաժողովին։ (Ցուզմունք)։ Լաբօրի հարցնում է գեներալներին այն նամակի մասին, որով Ա. գործակալը դիմել է իր կառավարութեան Դրէյֆուսի ձերբակալութիւնից 15 օր յետոյ, և որի մէջ հաղորդած է եղել ֆրանսիական զօրքերի թվի վերաբերմամբ տեղեկութիւններ ուղարկելու մասին։ Մերսիէ պատասխանում է, թէ այն տեղեկութիւնները, որոնք կարող էր հաղորդել Էստէրհազի՝ մեծ նշանակութիւն չունէին։

9 ժամ 50 րոպէին նիստը ընդմիջված յայտարարվեց։ 10 ժամ 15 րոպէին սկսվում է Կարրիէրի մեղադրական ճառը։ Կարճ առաջաբանից յետոյ, որի մէջ յայտնում է, թէ ինքը դիտաւորութիւն ունի կատարել իր պարտաւորութիւնը հանդարտութեամբ, մեղմութեամբ և կատարեալ արդարութեամբ, և գործի պատմութիւնը յիշելուց յետոյ, մեղադրողը յիշեցնում է, թէ ինչպէս վշտացան սպաները՝ երբ իմացան թէ դաւաճանը Դրէյֆուսն է։ Կարրիէր մի կողմ է թողնում թղթախաղի և կանանց վերաբերեալ հարցը, գտնելով որ գործը կարող է առանց նրանց բացատրվել։ Բordէրօն քննելով տեխնիկական տեսակէտից՝ Կարրիէր գալիս է այն եզրակացութեան, թէ որովհետև այս դոկումէնտում կայ նկատողութիւն պաշտպանութեան զօրքերի մասին՝ ուստի նրա հեղինակը պէտք է պատկանելիս լինէր բիւրօին։ Մաղագասկարի մասին նկատողութիւնը թոյլ է տալիս ենթադրել, թէ բordէրօն կազմված է օգոստոսին։ Կարրիէր բացատրում է, թէ Դրէյֆուսի համար աւելի դժուար չէր ձեռք բերել հրացանաձգութեան ձեռնարկը՝ քան Էստէրհազիի համար։ Նրա կարծիքով՝ Դրէյֆուս մինչև օգոստոսի 25-ը կարող էր կարծել, թէ կը գնայ զօրախաղերին. ինչ վերաբերում է բordէրօի գրութեան՝ նա նման է Դրէյֆուսի, նրա եղբայր Մատթէի և Էստէրհազիի ձեռքերին։ Դրէյֆուս կարող էր իր ձեռքին տալ իր եղբօր կամ Էստէրհազիի ձեռքերի ձևը։ Կարրիէր ասում է, թէ Էստէրհազի չէր կարող կարևոր տեղեկութիւններ դուրս տալ, օրինակ՝ երկաթուղիների մասին տեղեկութիւններ։ Մեղադրողը թուում է գաղտնի dossier-ից մի քանի դոկումենտներ, նրանց միայն թուահամարները յիշելով, և յայտնում է, թէ ուզում է յիշեցնել միայն մի նախադասութիւն—«Այստեղ հանգիստ է»։ Կարրիէր աւելցնում է. «Դուք գիտէք, ով է գրել այս»։ (Շարժում)։ Կարրիէր եզրակացնում է, թէ Դրէյֆուս յարաբերութիւններ ունէր օտար պետութեան հետ, և այսպիսի է մեղադրանքը նրա դէմ։

Բէնն։ Հէնց որ Կարրիէր վեր կացաւ իր ճառն արտասանելու՝ բոլոր սպաները, որոնք գտնվում էին վկաների թուում՝ դուրս եկան դահլիճից, որպէս զի գնան իրանց զօրաբաժինները։

27 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետական բանկը յայտնում է ընդհանուրի գիտութեան համար, թէ ապագայի համար հետևեալ կարգն է հաստատված՝ գանձարանների միջոցով փող փոխանակելու համար. թէ տոմսակներով և թէ հեռագիրներով, 5000 բուբլուց բարձր գումարները, որոնք փոխանակվում են գանձարաններից՝ բանկը և գանձարանները, որոնց անունով ուղարկված են փոխանակութիւնները, չը վճարեն անմիջապէս՝ եթէ ստացողը ծանօթ է այն հաստատութեան, որ պիտի վճարէ. հակառակ դէպքում՝ սա հեռագրով տեղեկութիւն կը հարցնէ այն գանձարանից, որ փոխանակութիւնն ուղարկել է, և փոխանակութիւնն ստացող տեղեկութիւն ստանալուց յետոյ միայն կը վճարէ։ Իսկ գանձարանների միջոցով մինչև 5000 ր. փոխանակութեան վճարումը, նոյնպէս և սրեէ գումարի, որ ստացված է բանկի գրասենեակների և բաժանմունքների միջոցով՝ մնում են անփոփոխ։

Բէնն։ Դատարանի նիստի շարունակութիւնը։ Կարրիէր քննում է Պիկարի գործ դրած հարցերը՝ Դրէյֆուսի անմեղութիւնը ապացուցանելու դիտաւորութեամբ և քննադատում է Պիկարի գործունէութեան եղանակը Էստէրհազիի վերաբերմամբ, որին ինքը, Կարրիէր, չէ գտնում առանձին արժանիքի տէր, բայց որի դէմ, դաւաճանութեան տեսակէտից, ոչինչ չէ կարելի ասել։ Կարրիէր ասում է, թէ երբ ինքը կարդաց Պիկարի մեղադրական յիշատակագիրը՝ կարծում էր, թէ կարելի է արդարացնել Դրէյֆուսին և հաստատել նրա անմեղութիւնը. բայց դժբախտաբար Պիկարի յիշատակագրում մի թերութիւն կար—նա չապացուցեց Դրէյֆուսի մեղաւորութիւնը։ Վկաների հարցուփորձը և գաղտնի dossier-ի քննութիւնը վերջնականապէս համոզեցին Կարրիէրին, թէ Դրէյֆուս յանցաւոր է։ Վերջը Կարրիէր ասում է. «Իմ խղճի խորքից ես ձեզ ասում եմ. Դրէյֆուս մեղաւոր է։ Ես խնդրում եմ նրա վերաբերութեամբ գործ դնել քրէական օրէնքների 76-րդ յօդուածը։ (Երկարատև շարժում)։ Վաղվայ նիստը նուիրված կը լինի Դէմանժի պաշտպանողական ճառին։ Դուրս գալու ժամանակ Լաբօրի սեղմեց Դրէյֆուսի ձեռքն և ասաց. «Քաջալերվեցէք»։ Ոչ մի միջադէպ չը պատահեց։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Տրանսվալի կառավարութեան խնդրով՝ անգլիական ներկայացուցիչը Պրետորիայում դիմեց Կապի գաղթականութեան նահանգապետ Միլ'նէրին հարցումով, թէ չէ՞ կարելի արդեօք որևէ բացատրութիւն տալ անգլիական զօրքերի սպառազինութեան մասին Տրանսվալի սահմանում։

ՊԱՐԻԶ։ Բարձրագոյն դատարանը Վէբսայլ փոխադրելու խնդիրը քննելուց յետոյ՝ Ֆալիէր և Վալ'դէկ-Ռուսսօ վճռեցին, թէ աւելի գործնական կը լինի գործը Գարիզում կատարել։ Լիւկսէնբուրգի պալատում արդէն սկսեցին պատրաստութիւններ դատարանի համար։ Պաշտպանը պահանջում է, որ հիւանդ Լիսսաժին ժամանակաւորապէս ազատութիւն տրվի։ Ֆաբր հարցուփորձ է անում Դիւբիւկին։

Կ. ՊՕԼԻՍ։ Ձերնօգօրիայի իշխանն ու իշխանուհին ուղևորվեցին Պիրէյ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ,—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.

Կ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1½—2 ժ. ներքին և միաբեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—6½—7½ ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.

Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ *հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիլ, արեան, կաթի և այլն:*

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Հավատարիմ (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—*պարապում է տանը ծաղկահատութեամբ, բժշկական մարմնամարզութեամբ և մարզելով. դիմել 11—1 ժ.:*

Հիւանդանոցի վերատեսուչ՝

21—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Մի գաւառական ընտանիք ցանկանում է ունենալ ՏՆԱՑԻՆ ՎԱՐԺՈՀԻ: *Պայմանների մասին դիմել՝ Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութեան գրասենեակը՝* (Лорисъ-Меликовская, № 11) Գ. Գալստեանցին: 1—4

Տեղափոխվելով Թիֆլիսից Շուշի, բացել եմ ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ԵՒ ՁԵՌԱԳՈՐԾԻ *ուսումնարան, որտեղ ընդունում եմ աշակերտուհիներ սովորեցնելու համար: Նոյնպէս ընդունում եմ ամեն տեսակ պատուէրներ:*

Բուլվարնայա փողոց, տուն Ստեփան Արզումանեանցի:

Տիկին Սոֆիա Հայրապ. Ղահրամանեանց 9—10

22—52

М 36019

Մանկական պարտէզ եւ ուսումնարան

ԿԱՏԱՐԻՆԷ ԶՈՒԼԻՋԱՆԵԱՆԻ

Բէքուտովսկայա (նախկին Սադովայա) փողոց № 38 միջին յարկ, ձախակողմեան բնակարան: Ընդունելութիւնը՝ օգոստոսի 25-ից, պարապմունքները՝ սեպտեմբերի 1-ից:

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՐԵԽԱՆԵՐ 2—5

Պատշաճաւոր թոյլտուութեամբ բացված է Բագումում

ԵՐԿՍԵՌՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

ՕՐ. ԱՆ. ՓՈՒՂԻՆԵԱՆՑԻ

Պատրաստում է բոլոր միջնակարգ դպրոցների համար: Ընդունելութիւնը կը սկսվի սեպտեմբերի 1-ից: Տօրգովայա փողոց, տուն Թաղիեվների № 8: 2—3

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Գ. Լ. ԿՈՒՋԱՆԵԱՆՑԻ

Բէքուտովսկայա փողոց (նախկին Սադովայա), Սօլօլակ, տուն բժ. Քօչարեանցի, № 50: Ընդունում է աշակերտներ պատրաստելու՝ գիմնազիաների, բէալական դպրոցի, կադէտների կօրպուսի համար և այլն: Աշակերտների ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի 24-ից, իսկ պարապմունքները՝ սեպտեմբերի 1-ից: 3—10

Մանկական Պարտէզ-Ուսումնարան եւ Պանսիօն

Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

ԲԱԳՈՒ

Ընդունվում են երեխաներ և պատրաստվում օրիորդաց և տղայոց գիմնազիայի, բէալական դպրոցի և այլ ուսումնարանների համար:

Մանկական Պարտէզի նպատակն է կրթել երեխաներին (4—7 տ.) Ֆրեբելեան սիստեմով: Ընդունվում են գիշերօթիկ և կիսագիշերօթիկ երեխաներ: 9—15

ԲԱԳՈՒ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ա. ԲԱԲԱԼԵԱՆԻ

Ընդունվում են երեխաներ գիշերօթիկ և երթևեկ պատրաստվում են գիմնազիոն բէալական և այլ դպրոցներ մտնելու համար: Պայմանների համար դիմել Баку, Старо Почтовая улица домъ Гаджи Неймата. (Ե. Հ. Շ.) 10—10

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եբաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետուութեան:

Բ) Առևտրական թուաբանութիւն:

Գ) Առևտրական նամակագրութիւն:

Դ) Գեղագրութիւն և ամենավաղ ձեռքերի ուղղելը:

Պարապմունքները սկսվելու են 1899 թվի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, *Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20:*

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, *Խիդեկէլի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում: Գինն է 3 ր. 50 կոպէկ: Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու:* (9 22) 16—20

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ:

Աւարտողները ստանում են ատեստատներ:

Ասանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն հաստիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, Կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (չ. չ.) 19—25

Մաքուր քիմիական, ծծմբաթթուային եւ աղաթթուային

Այդ՝ ամեն ընտանիքի համար ամենակարևոր բժշկական միջոցը կարելի է ձեռք բերել ամենաէժան գնով բոլոր գաւառական յայտնի վաճառականների մօտ, որի քիմիական մաքրութեան և խառնուածքի մասին երաշխաւորում է

Ր. ԿՕՀԼԵՐԻԱՆ և ԸՆԿ. ՄՕՍԿՎԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ: *Պահանջել անպատճառ, որ ամեն մի օրուակի վրա լինի ընկերութեան նշանը և դրոշմը, և չը վնասված մետաղաթելի ցանցը իր ընկերութեան պլոմբով.* Ր. Կ. և ԸՆԿ. М. 75287 (14)

Ֆիլանսների միանատրի թոյլտուութեամբ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова).

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատներ: *Կուրսերում ասանդվում են՝* 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն հաստիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առևտրական և բանկային 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն, 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի:)

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՍԿՍՎՈՒՄ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ից:

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում և Եղբ. Ծովիանեան և ընկ. ԲԱԳՈՒԻ *բաժանմունքում: Օտարաքաղաքացի ունկնդիրների յարմարութեան համար կուրսերում ընդունվում են գիշերօթիկներ: Կուրսերի կանոնադրութիւնը* (уставъ) *և մանրամասն ծրագիրը—տրվում են և ուղարկվում են ձրիաբար: Օտարաքաղաքացիները դիմում են՝* БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову, (Ե. Հ. Շ.) 15—25

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, *չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ,*

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, (1/3 *սեպտեմբերի*) ԱՆԱՏՕԼԻ *շոգենաւը, նաւապետ* ԲԻԱՆԿԻ: *Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:*

Բաթումից Գարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վ. Լիկսոր դ'Արնօին, Նարէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Թօվսարուխովի և Մայսուրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒ—եղբ. Վ. և Ի. Մելիք-Փաշայեաններին, Նարերեժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27: ՆՈՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերշենսօնին: (Ե. Հ. Շ.) 1—20

ՄԵՔԵՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ, Հ. ԿԵԱՆՋՈՒՆՑԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.

ԲԱԳՈՒ

ՆՐԱ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԲԻԲԻ-ՀԷՅԲԱԹՈՒՄ

Սկսել է իր գործունէութիւնը,

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՊԱՏՈՒԷՐՆԵՐ՝

ամեն սիստեմի մեքենաների և գործիքների, մասնաւորապէս հորեր փորելու և նաւթ քաշելու համար՝ շոգեկաթսաների, թորիչների, թուջէ զանազան ձուլուածքների՝ մինչև 1000 պուդ, զանազան պղնձէ ձուլուածքների և այլն և այլն: Գործարանի պահեստում կարելի է գտնել միշտ Բագուի համար հարկաւոր գործիքներ:

Գործարանի Բիբի-Հէյբաթի բաժանմունքը յանձն է առնում հորեր փորել կապալով Բիբի-Հէյբաթում:

Պատուէրների համար դիմել՝ քաղաքի գրասենեակը (Старо-Полицейская, *տուն Արաֆելովի, տէլէֆոն № 749), գործարան. տէլէֆոն № 54, կամ Բիբի-Հէյբաթի բաժանմունքը՝ տէլէֆոն № 451.* (Ե. Հ. Շ)

Дозволено цензурою, Тифлисъ, 27 Августа 1899 г

Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул., № 27.